

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՕՆԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՁ.

Տնտեսական պատմահայեցողութեան ներկայացուցիչները բազմաթիւ են, նրբութիւնները չափազանց շատ, առաջարկներն ու հարցին մօտենալու եղանակները տարբեր, բայց հիմնական պնդումը — պատմութեան հասկացողութիւնը, նրա ընթացքի, նրա մէջ գործող ուժերի ըմբռնումը և յատկապէս այդ ըմբռնումի կենդրոնական մասը նոյնն է:

Այդ ուղղութիւնն ասում է, պատմութեան մէջ միակ և կենդրոնական ֆակտորը, նրա ամենագօր մղիչ ուժը տնտեսական ֆակտորն է, մարդու տնտեսական պահանջը, կարիքները, այդ կարիքներին բաւարարութիւն տալու ցանկութիւնը և եղանակները և այդ ասթիւ տեղի ունեցած կռիւը, այս է ահա պատմութեան բովանդակութիւնը, որը արտայայտում է դասակարգերի իրար հետ ունեցած կռուի մէջ — կռիւ տնտեսական հողի վրայ: Տնտեսութիւնը նախապատճառն է և հիմքը մարդկութեան բովանդակ գործունէութեան, իսկ կեանքի միւս բոլոր կողմերը երկրորդական են ու պայմանաւորուած այդ նախապատճառով:

Այս է տնտեսական մատերիալիզմի ընդհանուր սահմանումը: Բայց ինչպէս ասացինք, այդպէս բացարձակօրէն չեն ընդունում այդ դպրոցի բոլոր ներկայացուցիչները. ոմանք սահմանափակումներով, միւսները վերադառնումներով են մօտենում այդ խնդրին: Եթէ իտալացի A. Loria-յի «Տիրող հասարակարգի տնտեսական հիմունքները» (1895 թ. Grünberg-ի գերմաներէն թարգմանութիւնը) կարդանք և A. Labriola-յի «Essais sur la conception matérialiste de l'histoire» (1897) ուսումնասիրութիւնն ի նկատի ունենանք, կրտսնենք որ տնտեսական պատմահայեցողութեան ամենամիակողմանի ներկայացուցիչները իտալացի Լորիան ու ֆրանսիացի Լաբրիոլան են:

Սակայն այդ միակողմանի և քարացած դոգմատիկների կողքին կան և շատերը — և դրանց թիւն անհամեմատ աւելի է — որոնք տնտեսական ֆակտորը ճանաչելով առաջնակարգ գործօն — չեն ժխտում մարդկային կեանքի վրայ ներգործող միւս ուժերը. սրանք ուրեմն չեն չեղտում տնտեսութեան բացառիկ, բացարձակ տիրապետութիւնը: Այժմ՝ զնալով խնդիրն աւելի և աւելի պարզւում է և տեսականի մասում — նոյն իսկ նախկին դոգմատիկներից շատ քչերն են անպայման պնդում տնտեսական պատմահայեցողութեան ամե-

նապարտակ ուժը՝ Պատմութեան և կեանքի աւելի խոր աւելի բաղմակողմանի ուսումնասիրութիւնը անհերքելիօրէն ապացուցանում է, որ մարդկային կեանքը բազմաձալ է ու նրա արարքները բազմաթիւ ծածկուած և յայտնի ուժերի միաժամանակ և միահամուռ զործունէութեան արդիւնք։ Տնտեսական պատմահայեցողութեան այդ միակողմանի պնդումները կորցնում են իրանց ոտքի տակի հողը հէնց իւր՝ պատմութեան փաստերի շնորհիւ և այդ բոլորից դեռ մի երկու տասնեակ տարի առաջ այդքան հոյակապ կարծուած չէնքից բան չի մնում, եթէ ոչ տիրաբար մի պահանջ, պատմութիւնն ուսումնասիրելիս անհրաժեշտ է ի նկատի առնել և հարկաւոր ուշադրութիւնն ընծայել նաեւ տնտեսութեանը, ազգերի, ցեղերի, անհատների տնտեսական հանգամանքներին, որովհետեւ նրանց տնտեսութիւնն եւս շատ զօրեղ կերպով ազդում է մարդկանց արարքներին, տրամադրութեան, նրա ապագայ քայլերի վրայ։ Միւս ֆակտորների կողքին պէտք է յատուկ ուշադրութիւն դարձնել ու մանրամասն քրքրել տնտեսական ֆակտորի տիրապետութեան, ազգեցութեան, նրա ներգործութեան սահմանները, որովհետեւ տնտեսական պատմահայեցողութեան այդ բացարձակ պնդումներից յետոյ արդէն պարզ է, որ ոչ միայն արհամարելի չէ տնտեսութիւնը պատմական ֆակտորների թւում, այլ և տեղ տեղ նա ձեռք է բերում անվիճելի գերակշիռ։ Այդ է ահա այն միակողմանի ուղղութիւնից մնացած տիրական պահանջը. իսկ այդ պահանջը շատ բան է— անսահմանօրէն շատ, որովհետեւ նա մեզ մի բանալի է տալիս, մի նոր ու աւելի յարմար բանալի մօտենալու մարդկութեան դեռ չգնահատուած, դեռ չհասկացուած չէնքի ստուերային դռներին։ Այդ բանալիով մենք մի քայլ ևս մօտենում ենք պատմութեան ճիշտ ըմբռնմանը։ Այժմ տեսնենք ի՞նչքան են այդ նորութեան հեղինակները— սրտեղից է գալիս և ի՞նչ ատաղձին անդամ և ինչպէս է ձեռնկերպել տնտեսական պատմահայեցողութիւնը թիւրիմացութիւն չլինելու համար անմիջապէս աւելացնենք, որ մենք մտադիր չենք տնտեսական պատմահայեցողութեան պատմութիւնը տալ այստեղ, ոչ էլ մանրամասն վերլուծութեան ենթարկել այդ ուղղութեամբ արտայայտող նախկին սոցիոլոգներին կամ պատմաբաններին։ Շատ լաւ իմանալով, որ տնտեսական մատերիայի դմբ կարլ Մարքսից և Ֆրիդրիխ էնգելսից առաջ շատ տնտեսագէտների, պատմաբանների, հասարակագէտների կողմից արտայայտուել ու հաստատուել է, բայց և այնպէս մենք նրանց բոլորին թողնում ենք ու անմիջապէս անցնում Մարքսին և էնգելսին, որովհետեւ այն, ինչ որ Սեն Սիմոն և Լուի Բլան ցիր ու ցան, շատ անդամ առանց ներքին կապի գիտակցութեան արտայայտուել են, Մարքս և էնգելս առաջին անգամ մի ներքին զօրեղ մղումով, գիտակցութեան անբռնելի թափով և

որ գլխավորն է հետևողական ու չհշտուած արտայայտուել են այդ սկզբունքը այլ ձևով: Նրանցից առաջ ոչ ոք այդպիսի ուժով, այդպիսի պայծառութեամբ և այդքան չհշտուած չի ցուցադրել տնտեսական մատերիալիզմը, որքան Մարքս և Էնգելս: Նրանք էին, որ առաջին անգամ պարզ ու պայծառ ձևակերպեցին տնտեսական պատմահայեցողութեան հիմնական մասերը: «Կարլ Մարքսը իւր մրրկային յեղափոխական կամքի ուժով, իւր մտքերի լրջութեամբ և խորութեամբ, իւր գիտելիփիկական քրքրող սրութեամբ, գէպի տիրող բոլոր կարգերն ունեցած իւր անյատակ ատելութեան զղացմունքով գերազանցում էր իւր բոլոր մտաւորական ընկերներին»: Մարքսի և Նրա ընկեր Էնգելսի սոցիալ-տնտեսագիտական ամբողջ փոխադրյալական աստուծը գալիս էր նախ Էնգելից, ապա Ֆոյերբախից ու Պրուգենից: Երկու ընկերները ուսումնասիրելով ազգերի տնտեսական ու հասարակական կեանքը գալիս են այն եզրակացութեան, որ տնտեսական ֆակտորը ոչ միայն գլխավորն է միւս ֆակտորների մէջ, այլ և միակ իրադանն է ու ներգործականը: Հասարակական կեանքի բոլոր միւս կողմերը պայմանաւորուած են տնտեսական ֆակտորի ամենազօր ուժով:

«Պատմութեան մատերիալիստական աշխարհայեցողութիւնը կլակէտ ունի այն դրութիւնը— թէ արտադրութիւնը ու դրա հետ մէկ անդ նաև բարիքների փոխանակութիւնը հիմնաքարեր են ամենայն տեսակի հասարակակարգի: Պատմութեան մէջ հանդէս եկած իւրաքանչիւր հասարակութեան բարիքների բաշխումն ու սոցիալական դասակարգերի և դասերի բաժանուելը կախուած է այն հանգամանքից, թէ ինչ է արդիւնաբերում և ինչպէս, և արդիւնաբերուած առարկաները ինչ կզանակով են փոխանակուած: Այսպիսով ամենայն տեսակի պատմական փոփոխութիւնների և քաղաքական յեղաշրջումների վերջին պատճառները փնտրելու է ոչ թէ մարդկանց գլուխների մէջ—յաւիտենական ճշմարտութեան և արդարութեան նկատմամբ նրանց ձեռք բերած աճող իմացութեան մէջ, այլ արտադրութեան և փոխանակութեան կզանակների փոփոխութեան մէջ. այդ վերջին պատճառները պէտք է փնտրել ոչ թէ փոխադրյալութեան, այլ այդ շրջանի տնտեսութեան մէջ» (Engels, Dühring 253): Նոր փաստերը ստիպել են մինչև այժմուայ եղած ամբողջ պատմութիւնը նոր հետազօտութեան ենթարկել. այդ հետազօտութեան ընթացքում Էնգելսը գտել է, որ «մինչ այժմեան ամբողջ պատմութիւնը դասակարգային կռիւների պատմութիւն է, որ հասարակութեան այդ իրար դէմ պայքարող դասակարգերը իւրաքանչիւր անգամուայ տնտեսական ստրուկտուրը իրական այն հիւմքն է, որից և որի միջոցով վերջի վերջոյ պէտք է բացատրել իրաւական և քաղաքական հաստատութիւնների բովանդակ վեր-

նաչէնքը, ինչպէս և իւրաքանչիւր պատմական ժամանակաշրջանի կրօնական փիլիսոփայական և բնդհանրապէս որեւէ այլ պատկերացումների եղանակը: Դրանով իզէալիզմը իւր վերջին ապաստարանից—պատմահայեցողութեան շրջանից ևս արտաքսուում էր. ստեղծւում էր մատերեալիստական պատմահայեցողութիւնը և գտնուած էր համարւում ճանապարհը մարդկանց գիտակցութիւնը նրանց գոյութիւնից բացատրելու և ոչ թէ գոյութիւնը գիտակցութիւնից, ինչպէս մինչև այդ իզէալիստական գաղափարն էր բացատրում: (Engels: Böhning, 11):

Նոյն միտքը Մարքսը հետեւեալ կերպով է արտայայտում. «Խօսւում են իզէաների մասին, որոնք իբր թէ ամբողջ հասարակութիւնը յեղափոխում են: Դրանով սակայն արտայայտում են այն փաստը, որ հին հասարակութեան մէջ առաջ են եկել և կազմակերպուել նոր հասարակութեան տարրեր. որ կեանքի հին պայմանների լուծուելովը զուգընթացաբար լուծւում, քայքայւում են նաև հին իզէաները. (Komm. Manifest, 22):—Կամ թէ—(Մարդկանց գիտակցութիւնը չէ, որ պայմանաւորում է նրանց գոյութիւնը, այլ նրանց հասարակական գոյութիւնն է, որով պայմանաւորւում է մարդկանց գիտակցութիւնը— հոգեկան աշխարհը»։ (Zur Kritik der politischen Oekonomie, երես V):

Բացի անտեսութիւնից, մնացած բոլորը լոկ վերնաշէնք է հասարակական ամբողջ գիւնքի մէջ: Հասարակական կեանքի ձևերն ու բովանդակութիւնը որոշողը միմիայն անտեսական գործօնն է: Կարլ Մարքս այդ միտքը աւելի ցայտուն արտայայտում է իր պոլեմիկական մի գրուածքի մէջ, որ ուղղուած է Պրուդոնի դէմ: «Արտադրական ուժերի որևէ ժամանակի զարգացումը ստիպում է արտադրողներին այս կամ այն յայտնի, որոշ ստորձանի վրայ արտադրել» (das Elend der Philosophie, 13): Այդ միտքը աւելի պարզ է հետեւեալ ցիտատի մէջ. «Ձեռագացը առաջացնում է մի հասարակութիւն, ֆէոդալական տէրերով, իսկ չոգազացը հանդէս է բերում մի հասարակութիւն արդիւնաբերական կապիտալիստներով» (նոյն գիրք, 91): Տնտեսական ֆակտորի ամենազօր ուժին ենթարկւում է նաև իրաւունքը իր բոլոր մասերով «Որ և է շրջանի քաղաքացիական իրաւունքը ոչ այլ ինչ է, և թէ ոչ արտայայտութիւն սեփականութեան որոշ զարգացման, այսինքն արտադրութեան արտայայտութիւն» (նոյն գիրք 13): «Թէ քաղաքական և թէ քաղաքացիական օրէնսդրութիւնները արձանագրում և յայտարարում են տնտեսական պայմանների կամքը և ցանկութիւնը լոկ» (նոյն գիրք 62):

Իսկ մօրալը, բարոյականի գիտակցութիւնը, որ այդպէս սերտ կերպով կապուած է իրաւունքի հետ, ենթակայ է անտեսութեան նոյն հզօր ուժին: Էնգելս հետեւեալ կերպով է արտայայտւում այս

մասին. մերժելով դոգմատիկ բարոյախօսանքի այն դրութիւնը, թէ գոյութիւն ունի աշխարհում մի յաւիտենական, անշարժ, վերջնական և անփոփոխելի բարոյական կենդրոնական օրէնք, վճռակի բացասելով, թէ բարոյական աշխարհն եւ ունի իւր մնայուն սկզբունքները, որոնք բարձր են պատմութիւնից և ազգերի անվերջ բազմազանութիւնից, էնգելս շարունակում է. «Մինչ այժմեան ամենայն բարոյականի տեսութիւն իւր վերջին հաշուով ոչ այլ ինչ է, եթէ ոչ արդիւնք իւրաքանչիւր անգամուայ տնտեսական հասարակարգի: Եւ ինչպէս որ հասարակութիւնը մինչև այժմ դասակարգային հակադրութիւնների մէջ էր տարուբերում, այնպէս էլ մինչ այժմեան մորալը դասակարգերի շահերը, և կամ թէ հէնց որ ճնշուած դասակարգը մի փոքր իրան ուժեղ էր զգում, նրա մորալը արտայայտող էր լինում այն ըմբոստացմանը, որ նա հանդէս էր բերում տիրողների հանդէպ: Մի այնպիսի մորալ, որ բարձր կանգնած լինէր դասակարգային ամեն տեսակ հակադրութիւններից և նոյն իսկ դրա յիշողութիւնից, մի իսկական մարդկային մորալ հնաքաւոր կրկնի մի այնպիսի հասարակարգի ժամանակ, որը դասակարգային հակադրութիւնները ոչ միայն յաղթահարած կրկնի, այլ և գործնական կեանքի մէջ բոլորովին մոռացած» (Dühring, 82).

Ահա այսպէս են խօսում տնտեսական պատմահայեցողութեան իսկական հիմնադիրները: Այդ համառօտակի արտայայտութիւններից պարզ է բոլորովին թէ տնտեսական ֆակտոր ասելով ինչ են հասկանում Մարքս և էնգելս և այդ ֆակտորին ինչ ուժ են վերագրում. գլխաւորապէս բարիքների արտադրութեան, փոխանակութեան և բաշխման եղանակներն ու ձևերը, ահա դրանցից է կախուած ամբողջ պատմական կեանքը և դրանց վրայ է հիմնուած եղել ազգերի բովանդակ անցեալը: Հասարակական կեանքի քաղաքական, ինտելեկտուալ, բարոյական և կրօնական կողմերը պատմական հոյակապ կառուցուածքի վերնաշէնքն են միայն՝ պայմանաւորուած այդ կառուցուածքի հիմքով—ներքնաշէնքով—որ է տնտեսական ֆակտորը:

* *
*

Մենք համառօտակի շօշափեցինք տնտեսական մատերիալիզմը այն չափով, ինչ չափով որ նա խօսում էր տնտեսական ֆակտորի որպէս պատմութեան ֆակտորի մասին: Մեր նպատակից բոլորովին դուրս էր տալ մարքսիզմի թէկուզ կարճ և հակիրճ բնութագիրը: Այդքանը բաւական համարելով, մենք այժմ մի քանի խորհրդածութիւններ կանենք և առաջ կըքաշենք մի քանի քննադատական կէտեր, մնալով դարձեալ մեր գծած նեղ շրջանում—տնտեսական ֆակտորի սահմաններում:

Տնտեսական մատերիալիստական պատմահայեցողութեան հիմնադիրներն ու նրանց հետևողները բնական է, որ ամենից աւելի պերճախօս կերպով իրանց նպատակին կը հասնէին և իրանց իդէալի բաւագոյն քարոզիչները կը լինէին, եթէ անմիջապէս գործի անցնէին—այսինքն որ և է երկրի, որ և է շրջանի շարագրեալ պատմութիւնը գրէին իրանց սկզբունքներով, որտեղ անբռնադրօսիկ կերպով, անկաշկանդ ու անհրաժեշտ երևան գար տնտեսական ֆակտորի միահեծան գորութիւնը, նրա ամենակարողութիւնը, Կարլ Մարքս և Էնգելս չարին այդ փորձը, (եթէ չհաշուենք Մարքսի մի քանի յօդուածներն ու նրա գրուածքների մէջ ցաք ու ցրիւ փռուած ակնարկները, նաև մասնակի անալիզները, Նոյպէս և Էնգելսի ուսումնասիրութիւնները ընտանիքի ծագման և նախնական հասարակութեան մասին)։ Դա աւելի նրանց աշակերտների գործն էր, որոնք ընդունելով իրանց վարպետների քարոզածը, որպէս դոգմա, երևան պիտի գային պատմագրութեան մէջ գործնականօրէն ապացուցանելու այդ վարդապետութեան ճշմարիտ լինելը։

Եւ իրաւ, տնտեսական պատմահայեցողութեան կողմնակիցները չատերը փորձել են մտնել պատմութեան գաւառը և նրա այս կամ այն շրջանը ուսումնասիրել զուտ տնտեսական ֆակտորի տեսակէտից։ Այլպիսի փորձ արել են ի միջի այլոց Մեհրից (die Lessing legende, Բ. հրտ. 1906.—հետաքրքիր է մանաւանդ այդ գրուածքի յաւելուածը, որ խօսում է պատմական մատերիալիզմի մասին) Բեբել (die Frau und der Socialismus), Կ. Կաուսսկի (Thomas More und seine Utopie 1907, 2 Aufl. Այս գրուածքի մէջ առանձնապէս կարևորը Կաուսսկու պատմական ներածութիւնն է հումանիզմի և ռեֆորմացիայի դարաշրջանի մասին, որին մենք մի փոքր յետոյ կը դառնանք)։ մի անգամ արդէն յիշուած Իտալացի Լորիան, բրեմնեյի պատուր Ալբ. Կալսհոֆը (das Christusproblem, 1902, die Entstehung des Christentums 1904, Das Zeitalter der Reformation 1907), Լիսգեմաու (Natürliche und sociale Religion 1894) և ուրիշները։ Ինչպէս հեշտութեամբ նկատելի է, թէ և այս հեղինակներից և ոչ մէկը մի ամբողջական պատմագրական երկ չի տուել, բայց իրենց թուած աշխատանքներն էլ բաւական է որ մարդ կարդայ ու համոզուի տնտեսական պատմահայեցողութեան վերին աստիճանի միակողմանիութեան և բռնազրօսիկ գրութեանը։ Մենք կուզէինք առաջ քաշել յատկապէս Կարլ Կաուսսկու «Թոմաս Մորը և նրա Ուտոպիան» և դրա վրայ ցոյց տալ այդ պատմահայեցողութեան անվստահութիւնը, որովհետև մատերիալիստական պատմահայեցողութեան տեսակէտից այս գիրքը խիստ կարևոր ու առաջնակարգ նշանակութիւն ունի։ այդտեղ Կաուսսկին յանգեւելով ամենածայրայեղ հետեանքների և եզրակացութիւնների, իւր քարոզած ուղղու-

թեան միակողմանիութիւնն ու բռնազրօսիկութիւնն աւելի ռելիէֆօրէն է ցուցադրուի:

* *

Շատ սղարդ է, որ Կառուսկին չի մօտենում հումանիտաների և ռեֆորմատորների դարին, որպէս զի այդ շրջանն ուսումնասիրի, տեանի որոնք են այդտեղ մղիչ ուժերը, պատմութեան սկզբնական, նախապատճառները: Նա թեւակոխում է այդ սահմանները արդէն որոշ և պատմահայեցողութեան իդէոլոգիայով և այդ է պատճառը, որ նա ոչ թէ ուսումնասիրում է, այլ հաստատումներ անում, անվերապահ և բացարձակ:

Ամբողջ գրքի մէջ ծայրէծայր դաժան ու սպանող բնական ֆատալիզմն է, որ կապարի ծանրութեամբ ընկնում է մարդու սրտի վրայ ու ճնշում: Պատմական անհրաժեշտութիւն, բնական անհրաժեշտութիւն խօսքերը և դրանց յարակից դարձուածքները կրկնւում են առանց խտրութեան անշափ, անհաշիւ Չի բացատրւում թէ ինչու է այս ինչ երևոյթը անհրաժեշտ, ինչ բնական անհրաժեշտութիւն է, որ առաջացնում է այն ինչ երևոյթը. իմանում ենք լսի, որ դա այդպէս պիտի լինի, որ դա այդ կերպ պիտի կատարուի: Այդպէս օրինակ, պատմական անհրաժեշտութիւն է, որ քրիստոնէսութիւնը պիտի դառնար այն, ինչ որ նա դարձաւ միջին դարերում: Կաթոլիկութիւնը պիտի դարձար, որովհետև նա հարկաւոր էր պետութեանը, կաթոլիկութեան միասիան պետութեան ծառայելը պէտք է լինէր և նրա համար աշխատելը:

Հետաքրքիր է մանաւանդ այն բացատրութիւնը, որ Կ. Կառուսկին տալիս է վանքերի, աղքատանոցների, անկեղանոցների և նմանօրինակ բարեգործական հաստատութիւնների ծագման նկատմամբ: Յայտնի է, որ միջին դարի ազնուականութիւնը և հոգևորականութիւնը շատ հարուստ էր, աշխարհական և հոգևորական իշխանների ձեռքն էր կենդրոնացած հոգը և իշխանութիւնը. իրանց կալուածքներից նրանց ահագին քանակութեամբ բնական բերքեր էին ստանում, որը գործ էր ածւում նրանց ապրուստի համար: Բայց որովհետև այդքան բարիքները նրանք չէին կարող մենակ վայելել, ուստի հրաւիրում էին նրանք ուրիշներին այդ բանում իրանց օգնելու. լաւ ընկեր-բարեկամներ, ճանապարհորդ ասպետներ, թափառական ձիաւորներ հրաւիրւում էին իշխանին սեղանակից լինելու ոգովհետեւ իշխանը շատ բարիք ունէր և ինքը մենակ չէր կարող վերջացնել իր ունեցածը:—Նոյն դրութիւնը նաև հոգևորականութեան մէջ, այդ վանականներն ու կղերականները չէին կարող այն բոլորն ուտել, ինչ որ ստանում էին, հոգևորական դասը չունէր ազնուականի զինւորական ծախքերը, նա շատ զգուշացու-

թիւններից ազատ էր, ուստի և չահ չունէր իւր հպատակներին շահագործելուց: այդ եւ պատճառը, որ հոգևորականութիւնն ընդհանրապէս մեղմ էր իւր հպատակների վերաբերմամբ: Սակայն հոգևորականների ունեցածն այնքան շատ էր, որ ինչքան էլ իւր ունեցածից սրան նրան առատութեամբ բաժանէր, դարձեալ ահագին քանակութեամբ բան էր աւելանալու և ահա այդ աւելացածն ևս նա գործ է ածում՝ դարձեալ բարեգործական նպատակներով— նոյն հիմունքներով:

Կառուտակուն յայտնի է անշուշտ, որ միջնադարեան եկեղեցին հսկայական ձևոնարկութիւններ ունէր. նա գիտի որ «պետութեան մէջ ազատիչ հրեշտակ է եղել եկեղեցին». նա բաց է արել շատ անգամ իւր հսկայական շտեմարանները և ողորմութիւն նուիրել կարօտեալներին. միջնադարեան վանքերում խնամուել ևն բազմաթիւ կոտորն ընկած, աղքատացած, անժառանգ կամ արտաքսուած ազնուականներ, աղքատներ և չունեորներ: Բայց միւս կողմից նոյնքան և աւելի հաստատ կերպով կառուտակին գիտի, որ ամեն բանի հիմքը տնտեսական ֆակտորն է, որից դուրս չկայ և ոչ մի ֆակտոր: Ինչպէս հաշտեցնել այս երկու տարբեր գրութիւնները: Կառուտակին հաշտեցնում է ամենապարզ և ամենահեշտ եղանակով. եկեղեցին բարեգործութիւն է անում, որովհետև աւելի ունի, նա աղքատներին է տալիս ու ողորմած է դէպի ուրիշները, որովհետև ինքը մենակ չի կարող ուտել իւր ունեցած բարիքները: Ահա ձեզ հարցի ամենայարմար լուծումը. ով չի հաւատում, թող կարգայ ակնարկուած գրքի մինչև յիսուն երևանները:

Տնտեսական պատմահայեցողութեան շարքին է պատկանում նաև հետեւեալ հաստատութիւնը. Իտալիան միջին դարերում նրա համար էր կենդրոնական տեղ բռնում և բոլորի ուշադրութեան առարկան դառել, որովհետև հարուստ էր, որովհետև տնտեսապէս բոլոր երկիրներից բարձր էր և այդ էր պատճառը, որ «Իտալիան արեւմտեան քրիստոնէութեան կենդրոնն է դառնում» (49). Տնտեսական այդ դերակշռութիւնն էր ու Հռոմի ունեցած բարձր աստիճանի ազդեցութիւնն էր պատճառը, որ պապականութիւնը, նրա հետ միասին Հռոմը կենդրոնական դիրքի հասան միջին դարերում (49) . . . Ու ոչ մի յիշատակութիւն կրօնական ներքին պատճառների մասին. ոչ մի խօսք այն մասին, թէ ամբողջ եւրոպայի այդ հսկայական հոսանքը դէպի Հռոմն անկարելի է հասկանալ միմիայն տնտեսական պատճառներով և Իտալիայի տնտեսական գերազանցութեամբ, որ այդտեղ կրօնական զգացումը, որ միջին դարերում մանաւանդ հզօրապէս մղիչ զգացումներից էր, այլ բազմաթիւ շարժիչ ուժերի հետ մէկտեղ ունեցել է իւր վճռակի դերը:

Կառուտակու համար դարձեալ միմիայն տնտեսական պատճառ-

ներից բոլորովին պարզ է նորմանների հանդէս գալը և նրանց խաղացած դերը պատմութեան մէջ: Բայց նա նեղութիւն չի կրում բացատրելու, թէ ինչպէս է, որ այն նորմանները, որոնք միջին դարի մէջներքում Մարսպային ահ ու սարսափ էին ազդում և աւարի ու կողոպուտի տալիս ամենահարուստ երկիրները, այդքան հեշտութեամբ ենթարկուեցին կաթոլիկ եկեղեցուն. նրանք—այդ ազատ մարդիկ, ինչ ուժով են դառնում պապի վասսալները ու նրա շնորհին սպասողները, չէ որ նրանք կարող էին նոյն իսկ իրան՝ պապին աւարի տալ, թալանել նաև այնուհետև ճիշտ այնպէս, ինչպէս որ նրանք անում էին, քանի դեռ չէին ենթարկուել Հռոմի քահանայապետին: Բնական է, որ մէկը իւր տնտեսական օգտի համար չի զոհի ու չի բաց թողնի իւր ձեռքից իւր ունեցած քաղաքական ու անձնական ազատութիւնը, որի շնորհիւ կարող էր իր տնտեսական օգուտը միշտ ունենալ և պահել:

Առհասարակ չափազանց թիւր գաղափար ունի Կառուսկին միջնադարեան պատմութեան, յատկապէս պապականութեան մղիչ ուժերի մասին: Վերցնենք հէնց խաչակրաց արշաւանքները. Բոլորովին ճիշտ է, որ խաչակիրներին տեղահան անողը ուրիշ շատ պատճառների կողքին նաև տնտեսական հանգամանքներն էին, գնացողների տնտեսական—նիւթական վիճակը: Բայց անտես առնել այդտեղ միջնադարեան յատուկ ոգին, կրօնականութեամբ յագեցած միջնադարեան մթնոլորտը, դարաւոր փակուածութիւնից վերջապէս դուրս գալու, նոր հորիզոններ տեսնելու անբռնելի տեսողը—նշանակում է իր պատմական երևոյթի միայն կողքով անցնել—չթափանցել նրա էութեան մէջ: Խաչակիրներին շարժող զօրիւ ուժերից մէկն էլ այն հանգամանքն էր, որ նրանք գնում էին կառուելու անհաւատների դէմ—այդտեղ յագուրտ էր ստանում միջնադարեան մոլեգնականութիւնը, ռազմասէր ասպետների արկածախնդրութիւնը, իշխանասէր և փառք փնտրող առաջնորդների գործունէութեան տենդը:

Երբ ժողովրդական, մասսայական ոգևորութիւնը իւր գագաթնակէտին է հասնում, երբ համը շարքերի խմբական յոյզերը էքստազի են փոխւում, այն ժամանակ մասսան ընդունակ է դառնում շատ անգամ այնպիսի շարժումներ առաջացնել, որ չլինելով բնաւ տնտեսական հողի վրայ բուսած տունկեր, նոյն իսկ հակառակ են գնում այդ մասսաների տնտեսական իսկ շահերին: Դրա պերճախօս վկան—ինքը «խաչակրաց արշաւանքներ» կոչուած պատմական մեծ երևոյթն է:

Հումանիզմը բացատրելով իբրև մի երևոյթ որ առաջ է եկել հիւսիսային բնակիչների դէպի հարուստ Իտալիա գիմելով և այնտեղ հների գործերի հետ ծանօթանալով—Կառուսկին անհետևողա-

կան և անտրամաբան է համարում հումանիստներին քաղաքական և մանաւանդ կրօնական հայեացքների մէջ, «Թէ նրանք մի կողմից երազում էին հին հասարակապետութիւնների մասին և միեւնոյն ժամանակ միապետութեան պաշտպան հանդիսանում, միւս կողմից նրանք աւելի հեթանոսանում էին և սակայն համոզուած կաթոլիկ էին մնում»։ Եւ փոխանակ այս պարզ և հասկանալի երևոյթի պատճառը մատնացոյց անելու, նա իւր տնտեսական պատմահայեցողութեան թէորիայից պինդ բռնած շարունակում է. «Ինչպէս որ արտադրութեան նոր եղանակները ֆէոդալականի նկատմամբ հակադրութիւն էին, այդպէս էլ նոր աշխարհայեացքը հակադրութիւն էր ֆէոդալական աշխարհայեացքին»։ Քանի աւելի էին ընկնում արտադրութեան հին եղանակները, այնքան համարձակ կերպով էին վարժում հումանիստները աւանդական կարգերի հետ, այնքան յանդուգն էին դառնում նրանք միջնադարեան ընտանիքի և ամուսնութեան ձևերը, ինչպէս նաև կրօնը ծաղրելու մէջ» (77)։

Այսպէս է ահա Կառուտսկու պատմական քննադատութիւնը. հումանիստները անհետևող և անտրամաբան էին, որովհետև նրանց ուշադրութիւնը անտիկ կեանքին էր ուղղուած, իսկ իրանք միջնադարեան իրականութեան մէջ էին ապրում. իրանց հայեացքներով հեթանոս հոռմէացուն կամ յոյնին էին նմանուում, բայց կաթոլիկ էին զգում իրանց։

Նախ նկատենք, որ հումանիստները ոչ միայն երեսանց, այլ շատ խոր կաթոլիկներ էին և սրտանց պատրաստ կաթոլիկութեան լաւագոյն տարրերը պահել և նոյն կաթոլիկութեան համար մարտիրոսանալ. այդ ցոյց է տալիս հէնց Թոմաս-Մորի կենսագրութիւնը, որ Կառուտսկին առաջ է բերում, նրա նամակներն ու նրա ցանկութիւնը—տեսնել պապականութիւնը հզօր, կարող և լուսաւոր։ Եւ ինչպէս կարող էին հումանիստները—Թոմաս Մորը, Էրազմ Ռոտդերգամցին, Հուտտէնը . . . որոնք ուսումնասիրել էին հին կեանքը, անտիկ գրականութիւնը, ապրում էին սակայն կաթոլիկ աշխարհում, մօտ 15 երկար ու ձիգ զարերի կաթոլիկ կուլտուրան ժառանգութիւն ունէին, ինչպէս կարող էին այդ մարդիկ միանգամից մոռանալ, ուրանալ, մերկանալ կաթոլիկութիւնից, թօթափել նրա ոպին ու բոլորովին հեթանոս դառնալ։ Եւ երբ նրանք մնում էին այսպէս մարդ, որպէս սոսկ մարդ, Կառուտսկին մեղադրում է նրանց անհետևողութեան մէջ ու անտրամաբան անուանում նրանց։

Այդ մի քանի օրինակներով կատարելապէս կարելի է գաղափար կազմել Կառուտսկու պատմական հասկացողութիւնների մասին։ Կառուտսկու այդ զբքի վրայ եւ մի փոքր աւելի երկար կանգ առայ, որովհետև տնտեսական պատմահայեցողութեան հետեողների գործնական քայլերի՝ նրանց հանդէս բերած պատմագրութեան մէջ

«Թումաս Մոորը» չգիտեմ ինչու պատուաւոր տեղ է բռնում, թերեւ այն պատճառով, որ ինչպէս ասացինք, այդտեղ ամենից աւելի ցայտուն աչքի է զարկում այդ պատմահայեցողութեան միակողմանիութիւնն ու դողմատիւմը: Իմ նաատակն էր ցոյց տալ, որ պատմութեան մէջ թերի է ու ծայրայեղացրած տնտեսական մատերիայիւմը, որ բացի տնտեսական փակտորից շատ ուրիշ փակտորներ կան պատմական կեանքում, ազգերի և անհատների բովանդակ կեանքի համար կազմակերպող, ստեղծագործող ուժ ունեցող, որ յատկապէս միջին դարի համար որ կողմը դառնանք, կեանքի որ աստարիղում լինենք կրօնական աշխարհայեացքով, մոլեգնողութեամբ, սնտիապաշտութեամբ, կաթոլիկ աշխարհի տարածած իդէաներով խտացած յագեցած օդն է, որ մեր շնչառութեանը հանդէպ պիտի դայ, որը արհամարել և փակտորների այն խմբակցութեան վրայով անցնել, որի սկիզբն ու ներգործութիւնը այնքան էլ հնչտ չէ մատնցոյց անել—թեթևամտութիւն է և պատմական անցքերի հասկացողութիւնների խեղաթիւրում: Ճիշտ է, որ անցեալի նկատմամբ չի կարելի բացարձակօրէն օրյակտիւ լինել, սակայն մի շարք ակնոյնների տեղակ կարելի է գոնէ ամենաչափը մի գոյգ վերցնել:

* * *

Տնտեսական փակտորի բացառիկ դերի կողմնակիցները—բունմարքսիստները—այժմ գնալով քչացել են և բազմաթիւ զիջումներ, կրճատումներ և նահանջումներ արել իրանց վարդապետների սկզբնական ուսմունքից: Եւ դա շատ բնական է. վերջին երկու երեք տասնամեակների բնթացքում գիտութիւնների ամբարած փաստերն ու տեսութիւնները եկան վերջնականապէս ապացուցանելու մարքսիստների մոլորութիւնը: Մարդկային կարիքները բազմաթիւ են և բազմազան, այդ կարիքները շատ անգամ իրարից անկախ են, բայց իրանց հանդէս գալու օրից և զարգացման բնթացքում իրար հետ մշտական յարաբերութեան մէջ են մտնում և իրար վրայ ազդում: Մարդկային գոյութեան այս կարիքները դժուար բացատրելի են իրանց սկզբնական ծագման տեսակէտից: Դրանք, ինչպէս ասացինք, բազմազան են. մարդս ունի անհատական պահպանման կարիք (տնտեսական), տեսակի պահպանման կարիք (սերունդ), ճշմարտութիւնը ճանաչելու կարիք (գիտական տենդենց), տիեզերքի խորհուրդների մէջ թափանցելու կարիք (մետաֆիզիկական տենդենց—կրօն), գեղեցիկ բաները յարգելու և դրանցով զարմանալու, հիանալու կարիք (գեղարուեստ) և այլն: Բայց մեր էութեան բոլոր հիմնական բնազդները մէկը միւսի նկատմամբ անկզրակացնելի են. նրանք զրուած են մեր մէջ մեղ ստեղծող

ուժի զօրութեամբ, որպէս ընդհանուր օրէնքի սկզբնական նախնական ստեղծագործութիւն, մէկը չի բացատրում միւսին, որովհետեւ բոլորն էլ անբացատրելի են (հմտ. Քսենոպոլ 303,4):

Մարդկային հարուստ հոգու բազմազանութիւնը վերածել լուսէր չոր ու շարժական սխեմայի—միայն տնտեսական հիմնական պահանջի ու կարիքների և վերջի վերջոյ ամեն բան դրանով բացատրել—դա անգիտանալ է նշանակում մարդկային հոգու միւս կողմերի և ծաւրերի նկատմամբ, եւ դարձանալի էլ չէ, որ տնտեսական մատերիալիզմը ամենախորտակիչ հարուածներն հէնց հոգեբանական դիպչալիկների կողմից ընդունեց և անպատասխան թողեց:

Եթէ Մարքսի և Էնգելսի լեզուով ասելու լինենք, պատմութեան աւելի ուշադիր, աւելի մանրամասն ու բազմակողմանի ուսումնասիրութիւնն է հէնց, որ անկասկած կերպով երևան է բերում տնտեսական մատերիալիզմի ծայրացեղ միակողմանիութիւնը, ապա օրինակ նրա անկալութիւնը: Տնտեսական ֆակտորը անզօր է բացատրելու մարդկային հոգու միւս կողմերը. նա անզօր է բացատրելու պատմութեան ընթացքում և ներկայ ժամանակներում երևան եկած և երևան եկող բազմաթիւ փաստեր:

Ի՞նչն է պատճառը, որ հալածուած կրօնների ներկայացուցիչները չարունակում են շարժարուել, գերադասում են 'մահը և չեն համաձայնում փոխել, ուրանալ կրօնը և դրա փոխարէն ապրել հարստանալ: Ի՞նչն է պատճառը, որ կրոնուելի ժամանակ հազարաւոր անգլիացի պուրիտաններ թողին իրանց հարուստ տուն ու տեղը, իրանց առատ հայրական օժակը և ստիպուած գիմեցին անծանօթ ու հեռու Ամերիկա, որի մասին նրանք գաղափար անգամ չունէին, թէ ինչ երկիր է, որտեղ նրանք տասնեակ տարիներ պէտք է աշխատէին, որ հասարակ պարզ գոյութեան անպաճոյճ պայմաններ ստեղծել կարողանային: Միթէ նրանց մղողը տնտեսական հակումն էր, ինչպէս պնդում են տնտեսական մատերիալիստները. չէ որ նրանք հարիւրաւոր գրկանքների էին ենթարկում իրանց: Պատճառը կարող էր ամեն բան լինել, բայց ամենից քիչ տնտեսական ֆակտորը: Զայլ կերպ մտածողներին և մանաւանդ ընդհանուր և մաշուած շարժուններով դատողներին խորհուրդ կրտայինք կարդալ պուրիտաններին Ամերիկայից գրած նամակներն Անգլիայում թողած իրանց բարեկամներին. (հմտ. Բարթ. 331): Ի՞նչն է պատճառը, որ Հայոց ամբողջ պատմութեան ընթացքում հազարաւոր նահատակներ տանջուել, շարժարուել են և անտանելի մահով մեռել, օրովհետեւ կրօնները չեն ուրացել, չնայած որ նրանց պարսիկները, արաբները, մոնղոլները խոստանում էին աւելի մեծ հարստութիւն, աւելի բարձր դիրք և կեանք:

Երբ մարդ թերթում է հայ նահատակների թէկուզ վերջին դարերի ցուցակը, ակամայից զարմանում է մեծնող մարտիրոսների այն տոկունութեան, արիութեան և անդրադուրեւութեան վրայ, որ նրանք հանդէս են բերում հաւատի խնդրում: Քրիստոնէութիւնից մահմետականութեան անցնելը նրանց խոստանում էր ամեն բան, և՛ կեանք և՛ փառք և լաւագոյն ապագայ, մինչդեռ քրիստոնէութեան մէջ յամառելը նրանց թէ կեանքը և թէ ունեցուածքը, նաև նրանց ազգականների ապահովութիւնը վտանգի էր ենթարկում: Սակայն չնայած այդ ամենին—մարդիկ նահատակում էին, ենթակայ մի վերին գերագոյն ներշնչման, որի արմատները մարդկային հոգու խորին ծալքերում պէտք է փնտռել, բայց ոչ արտագրութեան, փոխանակութեան և բաշխման պրոցեսի ձևերի և եղանակների մէջ:

Ի՞նչով բացատրել ամբողջ արուեստների գոյութիւնը Ի՞նչ կապ կայ տնտեսական փակտորի և այն զգացմունքի մէջ, որ մենք զգում ենք, երբ նայում ենք մի բնական գեղեցիկ տեսարանի, օրինակ Արարատ սարին կամ Գեղամայ ծովին: Տնտեսական որ պահանջն էր, որ ստեղծել էր տալիս Ռափայելի Սիքստինեան յաւերժ հրաշալի Մադոննան և Միքել Անջելոյի հոյակապ Վերջին Դատաւտանը: Տնտեսական ի՞նչ պահանջն է ստիպում մեզ, որ մենք թատրոն ենք դնում, չէ որ մենք զբաղուեալ ենք անում և կորցնում մեր տնտեսականի մի փոքրիկ մասը: Պարզ է, որ այս և սրա նման անթիւ դէպքերում մի այլ զգացմունք մի այլ հակում կայ, որ մարդուն ղեկավարում, այս կամ այն կողմն է մղում:

Տնտեսական մատերիալիզմի էական դրութիւններից մէկն էլ այն է, թէ մինչ այժմեան ամբողջ պատմութիւնը դասակարգերի կռիւ է եղել, ունևորների և չունևորների կռիւ, կռիւ հարուստների և աղքատների—բազմաթիւ նրբերանգներով ու չերաւորումներով: Հռչակաւոր կոմունիստական մանիֆեստի հէնց առաջին նախադասութիւնը կարճ ու կտրուկ կերպով յայտարարում է ի լուր աշխարհի. «Մինչայժմեան բոլոր հասարակութիւնների պատմութիւնը դասակարգային կռիւների պատմութիւն է»: Այդ միտքը այդքան որոշ և համարձակ դեռ ոչ ոք չէր արտայայտել: Նոյն գրքի յառաջաբանում Ֆրիդրիխ Էնգելս հետեւալ կերպով է ձևակերպում կոմունիստական Մանիֆեստի գլխաւոր միտքը. «Իւրաքանչիւր պատմական էպոխայի տնտեսական արտադրութիւնը և նրանից անհրաժեշտօրէն բխող հասարակական չերաւորումը հիմք է կազմում այդ էպոխայի քաղաքական և մտաւոր պատմութեան համար, որից հետևում է, որ բովանդակ պատմութիւնը դասակարգային կռիւների պատմութիւն է եղել. կռիւներ, որոնք տեղի են ունեցել շահագործող և շահագործուող, իշխող և հնազանդուող դասակար-

գերի մէջ, հասարակական զարգացման դանազան աստիճանների վրայ: Դասակարգերի այդ կոիւր, որ լցնում է պատմութեան ամբողջ բովանդակութիւնը, ինչ խօսք, որ լոկ տնտեսական հոգի վրայ է տեղի ունենում, պայմանաւորուած միմիայն տնտեսական փակտորով:

Ըստ Մարքսի և Էնգելսի դասակարգային կոիւր 19-րդ դարի կէսերին արդէն տեղի է ունենում մի կողմից միջնադարեան կապանքներից ազատուած, հարստացած և ճոխացած բուրժուայի, միւս կողմից գնալով աղքատացած, բոլորովին սեփականազուրկ դարձած պրոլետարիատի միջև: Սակայն կապիտալիստական ամբողջ կազմի անկայունութիւնն էլ հէնց այն է, որ ըստ երևոյթին թոյլ և անզօր պրոլետարիատը վաղուայ պայքարի մէջ յաղթողը պիտի հանդիսանայ, մի յեղափոխական հարուածով վերջ դնելով կապիտալի և սեփականութեան և սկիզբ պիտի դնէ աւելի արդար և բնական ըաշխման: Դասակարգային կոուր համառօտ ձևակերպումն այդ է ահա: Բայց այստեղ ևս մարքսիստները պատմական իրողութիւնը, գիտական ճշմարտութիւնը չէ, որ արտայայտում են: Ճիշտ է, սոցիալական կամ տնտեսական դասակարգերն են, որ գիտակցաբար թէ անդիտակցօրէն իրար հանդէպ են կանգնած և պայքարում են— մերթ խաղաղ ու լռելեայն, մերթ աղմկով ու ահեղ շեշտերով: Տնտեսական է այդ կոիւր մեծ մասամբ: Բայց հասարակական կեանքը, ինչպէս ասացինք, մի շահ չունի լոկ, նա չի հետաքրքրւում և զբաղւում կեանքի լոկ մի հատիկ արտայայտութեամբ. կեանքը— լինի նա անհատական թէ համայնական— բաղկացած է և արդիւնք դանազան պատճառների, բաղմաթիւ փակտորների: Հասարակական կեանքի զանազան կողմերի արտայայտութեան մէջ միշտ տնտեսական կողմը փնտրել հակառակ է մարդկային հոգու ներքին կազմուածքին: «Խոստովանում ենք, ասում է Քսենոպոլ, որ մենք ոչ մի դասակարգային կոիւ չենք գտնում օրինակ իտալական նկարչութեան զարգացման մէջ, կամ գերմանական երաժշտութեան, կամ Ֆիզիկայի, կամ քիմիայի և բնդհանրապէս բոլոր գիտութիւնների զարգացման մէջ» (302):

Անվիճելի է, որ նախնական մարդու համար տնտեսական հարցը, գոյութեան խնդիրը առաջին տեղն է բռնել, ինչպէս և կենդանիների համար: Բայց անվիճելի է նաև այն, որ հէնց սկզբից վայրենի մարդու հոգու մէջ նոր տեսակի մտքեր, զգացմունքներ են ծագել հոգու անմահութեան, մահուան, հիւանդութիւնների մասին— այնպիսի զգացմունքներ, որոնք յետոյ հիմք են եղել նրա աշխարհայեցողութեան: Այդպիսով առաջ է եկել նախնական մարդու կրօնը, նրա գեղասիրական հակումներն ու հասկացողութիւնները, որոնց վրայ կարող է ի միջի այլոց ազդած լինել նաև

տնտեսական ֆակտորը, որոնք սակայն չեն պայմանաւորում միայն տնտեսական ֆակտորով, նախամարդը ոչ միայն մղւում է տնտեսութիւնից, ոչ միայն տնտեսական կարիքներին է ենթարկւում, այլ և այդ տնտեսութիւնն իրան է ենթարկւում, վայրենուն անասունից բարձրացնողը նրա տնտեսութիւնը չէ, որովհետև տնտեսութեամբ նա անասուններին համարեա զեռ հաւասար է, մանաւանդ նախադատական դարերի առաջին շրջաններում, իսկ ընդհակառակը, մահուան և կեանքի փոխադարձութիւնը, որ վայրենին ունի—ահա այդ է, որ նրան բարձրացնում է իւր շրջապատող անասնական, կենդանական աշխարհից և ստեղծում առաջին շղթան այն իդէական սիստեմի, որն այնուհետև նրա զարգացման ամբողջ ընթացքում պէտք է ուղեկցէր նրան (Հմտ. Բարթ. 349):

Մի ուրիշ օրինակ, որ ջոյց է տալիս, թէ տնտեսական ֆակտորը չէ, որ մարդուն մղւում է, նրան շարժում է, այլ շատ անգամ որոշ կարգի իդէաները, որոշ խմբի իդէոլոգիան: Ի՞նչ բանի են ձգտում սոցիալիստները—տնտեսական հաւասարութեան, ազատութեան, արդարութեան: Այդ բանը չկայ, նրանք ձգտում են դրան հասնել և դա նրանց իդէալն է: Այդ իդէալին հասնելու համար նրանք պրոպագանդա են անում, տարածում են իրանց մտքերը, իրանց իդէաները գրքերի լրագրերի, դասախօսութիւնների միջոց և աշխատում են համոզել, մտքեր պատրաստել: Խնդիրն այն է, որ այսօր իրականութեան մէջ չկայ հաւասարութիւն, չկայ ցանկացած արդարութիւնը, այլ ընդհակառակը դրա բոլորովին հակառակն է տիրում: Մարքսիստներն և միւս սոցիալիստներն աշխատում են այդ իդէալին հասնել ոչ թէ արդէն տնտեսական ֆակտորի մղիչ ուժով, այլ իդէոլոգիայի վերացական գործութեամբ: Եւ այդ ֆակտորը, մտաւոր ու իդէական այդ գործունէր, որը տնտեսական չէ և տնտեսութեան հետ կապ չունի, ունենում է իւր ազդեցութիւնը գրաւելով նոր խմբեր և աւելացնելով սոցիալիստների շարքերը: Դա մի ապացոյց է, որ մարքսիստներն անգիտակից կերպով ընդունում են նաև այլ ֆակտոր, բացի տնտեսականից (Հմտ. Բարթ. 351):

Պատմութեան մէջ չկայ աւելի մեծ յանցանք, քան պնդել, թէ լոկ տնտեսական ֆակտորն է ստեղծողը, գործողը և ապրեցնողը: Ի՞նչն է պատճառը, որ միևնոյն տնտեսական պայմանների մէջ եղած մարդիկ վերջը տարբեր աշխարհահայեացքի տարբեր հասկացողութիւնների տէր են դուրս գալիս, ինչն է այդտեղ գործողը—միթէ տնտեսական ֆակտորը, որը բոլորի համար միևնոյն է. պարզ է, որ այդտեղ բացի տնտեսականից և տնտեսականից էլ աւելի ի նկատի պէտք է առնել մարդու հոգեկան մտաւոր կարողութիւնները, նրա մտաւոր աշխարհը, որը միայն տնտեսականով, հացի խնդրով չի ղեկավարւում:

Առանց հակադրութեան—չկայ առաջագիմութիւն, բացականչում է Կ. Մարքսը Դա ճիշտ է. սակայն Մարքս ընդունում է, որ երբ սոցիալիզմը իրականանայ, երբ դասակարգային կռիւը հասնի իւր նպատակներին, ամեն բան հաւասարութի, այն ժամանակ կը դադարի նաև հակադրութիւնը, ուրեմն և առաջագիմութիւնը: Դուրս է գալիս ուրեմն, որ երբ սոցիալիզմն իրականանայ, այն ժամանակ մարդկութիւնը կը գրկուի իւր ամենաթանկագին ու նուիրական իրաւունքից, առաջ գնալու կատարելագործութեւնը ընդունակութիւնից:—Այժմ ոչ մի լայն մտածող սոցիալիստ այդպիսի սոցիալիզմ չի ցանկանայ:

Ինչպէս յայտնի է, մարքսիստական պատմահայեցողութիւնը չի ընդունում նաև անհատի դերը պատմութեան մէջ. եթէ տընտեսական ֆակտորն է անհատին և հասարակութիւններին մղողը, ապա ուրեմն անհատներն ըստ ինքեան անդօր են տնտեսութեան ամենակարողութեան առաջ: Անհատի դերի մասին մենք արդէն խօսեցինք. այստեղ այսքանն աւելացնենք, որ եթէ նոյն իսկ ենթադրելու լինենք, որ տնտեսական ֆակտորը միակն է պատմութեան մէջ, դարձեալ պիտի կրկնել, որ նոյն այդ ֆակտորը կարող է մի անհատի բոլորովին այլ կերպ տրամադրել, քան մի ուրիշին և հէնց այդ ազդեցութիւնների տարբերութիւնն արդէն անհատների անհատական դերի, կարողութեան չափանիշն է:

Տնտեսական ֆակտորն անշուշտ նշանաւոր տեղ է բռնում մարդկութեան պատմութեան կազմակերպման գործի մէջ. բայց նա «յոկ մի կաթիլ է ֆակտորների ովկիանոսի մէջ և պնդել թէ տընտեսական ցանկութիւնները և տեխնիկայի դրութիւնը լցնում են այդ ովկիանոսը, արդէն իսկ մեծագոյն միակողմանիութիւն է»: Եթէ ընդունենք տնտեսական ֆակտորի եզակի դիրքը, այն ժամանակ մեզ համար պարզ չի լինի և անհասկանալի կը մնայ պետութիւնների անկլումը: Ինչու համար կործանուեցան, անհետացան Բաբելոնն ու Հին Եգիպտոսը, Յունաստանն ու Հռոմի գոռ փառքը: Չէ որ թէ Բաբելոնացիին և թէ Եգիպտացիք, թէ յոյները և թէ Հռոմայեցիք նոյն իսկ իրանց կորստեան մոմենտում ունէին լաւ ապրելու, յարատեւելու բուռն տենչանքը, ունէին ինքնապաշտպանութեան, ինքնագոյութեան գորեղ մղումը: Եւ չէ որ նրանց վրայ յարձակող ցեղերը տնտեսական ֆակտորի—արտադրութեան և փոխադրութեան ձևերի անսակէտից ոչնչով բարձր չեն զբաղեցրել:—Պարզ է, որ ուրիշ մոմենտներ են գալիս այդտեղ. տնտեսանիւի ու անըմբռնելի հազարաւոր ֆակտորների միահամուռ ազդեցութիւնն է, որ մի ազդ կորստեան անդունդն է գլորում, միւսին բարձրացնում փառքի գալաթնակէտը:

Մինչև այժմ փորձեցինք ցոյց տալ, որ սխալ է, պակասաւոր

և թերի, մարդկանց և ժողովուրդների, նաև ամբողջ մարդկութեան կեանքը, նրա ծնունդն ու դարգացումը, նրա բովանդակ պատմութիւնը մի ֆակտորի ազդեցութեանը վերագրելու Միակողմանի է առել, որ բնութիւնն է լոկ, նրա աշխարհագրական դիրքն ու կլիման է, որ պատմութիւնը ստեղծում է։ Սխալ և մոլորեցուցիչ է ռասսայի թէորիան, ինչպէս և սխալ, պակասաւոր է պնդել, թէ լոկ անհատն է, որ պատմութեան մէջ ամեն բանի սկիզբ է դնում, մասսան ոչխարների մի հօտ է և կամ հակառակը։ Այս բոլոր թէորիաները միակողմանի են և շատ անգամ դատապարտելի։ Վերին աստիճանի ծիծաղելի կըլինէր, ասում է Բերնհայմ, եթէ մի կօշկակար պատմութեամբ զբաղուելիս պնդէր, թէ պատմութեան մէջ ամենամեծ ֆակտորը կօշիկների զարգացումն է։ Ծիծաղելի կըլինէր, բայց այն բազմաթիւ փիլիսոփաները բոլորովին նոյն կերպ են վարուել և այսօր էլ վարւում են։ Բնագէտը, որ ձեռք է առնում պատմութեան ուսումնասիրութիւնը, գալիս է այն եզրակացութեան, որ ամեն բան գալիս է բնական հանգամանքներից։ Մարդաբանը պնդում է, թէ ռասսան է ամենազօր ֆակտորը. տնտեսագէտը մեզ հաւատացնում է, թէ տնտեսական պայմանի մեջ պիտի որոնել փրկութիւնը. և այսպէս անվերջ, բոլորն էլ կօշկակարի չափ ծիծաղելի։

Պատմութիւնն արդիւնք է այդ բոլոր և դրանց նման ծանօթ ու անծանօթ հազարաւոր ազդեցութիւնների, անհատական, մասսայական, բնական ու տնտեսական մոմենտների իրար հետ բախմանը, նա առաջ է դալիս ու ծաւալւում ուժ առնելով իր չրջապատի բոլոր մասերից. այդտեղ պիտի հաշուել և՛ կլիմայ և՛ աշխարհագրական դիրք և մարդու ինքնուրոյն հոգին, և մասսայական հոգեբանութիւնը։ Պատմութիւնը կռիւ է մշտական—կռիւ բազմազան ֆակտորների։ Կարելի է ի հարկէ այդ կամ այն ֆակտորը չեղտել, նրա ազդեցութիւնը աւելի կամ պակաս ուժեղ արտայայտել բայց չի կարելի պնդել թէ միմիայն այս կամ այն ֆակտորն է պատմութեան մի հատիկ նիւթը։

Այդ միակողմանիութիւնն ամենից աւելի ծանրանում է տնտեսական մատերիալիզմի վրայ, որովհետեւ ամենից աւելի մեծ թափով նա է չեղտում տնտեսական ֆակտորի եզակի բացառիկ դիրքը։ Բայց և Մարքս և նրա զպրոցի ներկայացուցիչներն էին, որ պատմութեան ըմբռմանը աւելի խորութիւն և բազմազանութիւն տուին, որովհետեւ մինչև այդ արհամարհուած տնտեսական ֆակտորը ասպարէզ քաշեցին։ Դրական մտքով տնտեսական պատերազմիզմը կարեւոր է, որպէս ոչեւիցիա իրանից առաջ իշխող հասկացողութիւնների դէմ, գլխաւորապէս միակողմանի իդէոլոգիայի դէմ։ Տնտեսական մատերիալիզմը ստիպեց մարդկանց յետ կենալ պատ-

մութեան այդ օրինակ բացառիկ իդէոլոգիական բացատրութիւնից. այդ մտքով տնտեսական մատերիալիզմի ֆորմուլաներից շատերը հասունութիւն գտան նաև այնպիսի պատմաբանների կողմից, որոնք չպատկանելով այդ ուղղութեան, սկսեցին այնուհետև գլխաւոր ուշադրութիւնը տնտեսական ֆակտորի վրայ դարձնել: Մինչև Մարքս—էնգելսը մտնեա էր առնում պատմութեան մէջ տնտեսական ֆակտորը: Մարքս իւր ուժեղ և հանճարեղ գրչով առաջ քաշեց, զգաց և զօրեղ կերպով արտայայտեց ի հարկէ իւր բուն բնաւորութեան հարկը տալով անուղղելի ծայրայեղութիւնների մէջ ընկնելով: Բայց կրկնում ենք, պատմութիւնը տնտեսական մատերիալիզմի սխալներից աւելի քիչ է մնասուել, քան թէ նրա առողջ կորիզից օգտուել:

Բացի այն, որ պատմութեան մէջ միաժամանակ կարող են ներգործութիւն ունենալ և ունին բազմազան ֆակտորներ, ի նկատի պէտք է ունենալ նաև այն, որ միևնոյն ֆակտորը մարդկութեան մասնուկ հասակում կարող է աւելի մեծ ազդեցութիւն ունեցած լինել քան թէ նրա յետագայ շրջաններում: Ինչպէս օրինակ այժմ հոգեբանօրէն բոլորովին հասկանալի է, որ նախնական մարդու հոգին, որ դեռ բազմաձև քաղաքակրթութեան բեռն տակ չէր կուչ եկել, աւելի ազատօրէն և առատութեամբ էր ընդունում բնութեան տպաւորութիւնները, աւելի հեշտութեամբ էր անձնատուր լինում նրա ներշնչումներին, հետևապէս աւելի ուժգնօրէն ազդուում նրանից քան արդի մարդը, որ բնութեան խորհուրդներից շատերն արդէն հասարակ ընական օրէնքների է վեր ածել ու իւր ուժեղ բանականութեան քննադատութեանն ենթարկել: Այդպէս էլ կուլտուրայի ազդեցութիւնը, իբրև մի ամբողջական ֆակտորի ազդեցութիւն, ճնշումն անշուշտ աւելի թոյլ պիտի եղած լինէր, քան այժմ, երբ նա իւր ամենապարփակ թիւերի մէջ է առել և առնում է հետզհետէ ամբողջ մարդկութիւնը: Այսպէս ուրեմն, զանազան ֆակտորների միաժամանակ և միահամուռ, նաև տարբեր ժամանակներում և յաջորդական գործակցութեամբ առաջ է գնում պատմական կեանքը:

Իսկական արդարացի և ճշմարտութեան մօտ պատմահայեցողութիւն կարելի է որոնել այնտեղ, ուր հաշտութեան և միատեղ գործակցութեան ձեռք են կարկառում յիշուած և չյիշուած բազմաթիւ պատմական ֆակտորներ:

Գ. Ալբուհեան

